

աւանդ սովորոյթ (ՅՏ. ԺԳ, 5), որ կը պահուէր ընդհանուր վաներու մէջ, եւ հաւանօրէն Հայոց ալ: — Կար մասնական ուրիշ լուացում մ'ալ՝ զոր պիտի տեսնենք սեղանի վրայ:

Բ. Առանին լուացման կը յաջորդէր օծուիլ: Հայաստան՝ եւ առաւելապէս Այրարատ՝ կ'ընծեռէր «զգանագանումն իւզարուխ սերմանցն» (Փրպ. 23), որոց քաղցրաբոյր հեղուկը մզելով՝ կ'ամփոփէին շիշ՝ (Մտթ. ԻԶ, 7, եւն. Եզն. 105) կամ սրուակ (Յղթ. Ժ, 5) կամ կաշարայ (Ոսկ. Թղթ. Ա, 603, 781) կոչուած ապակեայ կամ այլ նիւթերէ փոքրիկ սրածեւ անօթոց մէջ (Դար. Ա, 176-7). եւ ազոցմով կ'օծուէին մեր տիկնայք (Եղիշ. 173. Փրպ. 332): Ասոր իսկական նպատակն էր՝ «ի զուարթութիւն խրախուլթեան» (Եղիշ. անդ). այս ինքն իրենց այդ անոյշ բոյրերով հեշտացնել կոչնականաց զգայուն հոտոտելիքը: Միջին դարու պճնասէր հայուհիք սովոր էին նաեւ իրենց վրզէն «ծրարս խնկոց» կախել, զոր «տաշխ» կը կոչէին (Վնկ. Հրց.), անշուշտ ստաշխէն ծագած: Եւ կամ «ի լանջս» կը պահէին որ եւ է «նիւթ անուշահոտութեան»,

1. Պրս. յիշա բառն (Հիւրշ. 214).